# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«8» դեկտեմբերի 2014թ — ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Ցողամարգ

N 26

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ Ֆ. Ցոլակյան

Հարգելի պարոն Ցոլակյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի համաձայն, կից ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի նիստի թիվ 19 -Ա, 20- Ն, 21-Ա, 22 -Ա, և 4 Դեկտեմբեր 2014թ-ի թիվ 23 -Ն որոշումները:

Առդիր՝ 17 թերթ:

Հարգանքներով՝

ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Գ.Բարսեղյան


ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 10473-14
08 12 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19 Ա

«2» դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Ցողամարգ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի սեփականության 2014թվականի գույքագրման փաստաթղթերը` համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ`

Գ.Խաչատրյան կողմ
Ա.Հարությունյան կողմ
Խ.Հարությունյան կողմ
Վ.Մովսիսյան կողմ
Ս.Վարոսյան կողմ

*Ցողամարգի համայնքի ղեկավար* — *Գ.Բարսեղյան*

«2» դեկտեմբերի 2015թվական
գյուղ Ցողամարգ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի
ավագանու 2014 թվականի դեկտեմբերի
2-ի թիվ 22 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Գույքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի արժեքը /հազ. դրամ/ | Ընդամենը արժեքը /հազ. դրամ/ | Գույքի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուղապետարանի վարչական շենք | հատ | 1 | 705.4 | 705.4 | Վերանորոգման կարիք ունի |
| 2. | Մանկապարտեզի շենք | հատ | 1 | 2010.0 | 2010.0 | Վերանորոգման Կարիք ունի |
| 3. | ոչխարանոց | հատ | 1 | 956.0 | 956.0 | Գտնվում է քանդված վիճակում Առկա է միայն պատերը |
| 4. | Ջրագիծ երկաթյա | կմ | 3.5 | 38.0 | 38.0 | Վերանորոգման կարիք ունի |
| 5. | Խմելու ջրի ներտնտեսային ցանց | կմ | 1 | 38.0 | 38.0 | Շահագործվում է, վերանորոգման կարիք ունի |
| 6. | Ներհամայնքային ճանապարհներ | կմ | 3.5 | 237.3 | 237.3 | Շահագործվում է, վերանորոգման կարիք ունի |
| 7. | Մետաղական խողովակաշարեր | կմ | 2.9 | 2900 | 38.0 | Չի օգտագործվում, կաիք ունի վերանոգման |
| 8. | Գերեզմանոց | հատ | 1 | | | Օգտագործվում է |
| 9. | Գերեզմանոց /հին գյուղատեղի/ | հատ | 1 | | | Օգտագործվում է |
| | **Գյուղապետարանի գրասենյակային գույք** | | | | | |
| 1. | Գրասեղան | հատ | 2 | 8.6 | 8.6 | Քայքայված է, օգտագործման պիտանի չէ |
| 2. | Երկաթյա պահարան | հատ | 2 | 9.7 | 9.7 | Բավարար, օգտագործվում է |
| 3. | Աթոռ | հատ | 2 | 1.1 | 2.2 | Կոտրված են, օգտագործման պիտանի չեն |
| 4. | Գրապահարան | հատ | 1 | 8.8 | 8.8 | Կոտրված է, օգտագործման պիտանի չէ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Տեսախցիկ | հատ | 1 | 180.1 | 180.1 | Սարքին Վիճակում |
| 6. | Մոնիտոր17 GOLOR MONITOR ORANGE | հատ | 1 | 87.0 | 87.0 | Սարքին, օգտագործվում է |
| 7 | Տպիչ HP 3744 | հատ | 1 | 50.0 | 50.0 | Չի օգտագործվում Անսարք է |
| 8 | Համակարգիչ p/2400 | հատ | 1 | 238.0 | 238.0 | Չի Օգտագործվում Անսարք է |
| 9 | Համակարգչային տպիչ PIXMA_P2 250 | Հատ | 1 | 98.0 | 98.0 | Չի Օգտագործվում Անսարք է |
| 10 | Հեռուստացույց NAPRO | Հատ | 1 | 54.5 | 54.5 | Օգտագործվում է |
| 11 | Էլ վառարան | հատ | 2 | 45.0 | 90.0 | Օգտագործվում է |
| 12 | Էլ վառարան | հատ | 1 | 30.0 | 30.0 | Օգտագործվում է |
| 13 | Ուղղահայաց շերտավարագույր | քմ | 9 | 7.5 | 68.0 | Օգտագործվում է |
| 14 | սերմնազտիչ | Հատ | 1 | 24.6 | 24.6 | անսարք |
| 15 | Կշեռք 3 տոննա | հատ | 1 | 9.8 | 9.8 | անսարք |
| 16 | Դինամիկ-069 | հատ | 1 | 0.7 | 0.7 | անսարք |
| 17 | ուղեգորգ | մետր | 2 | 0.69 | 1.3 | Օգտագործվում է |
| 18 | Դաշնամուր պիանինո Կոմիտաս | հատ | 1 | 24.2 | 24.2 | Չի Օգտագործվում անսարք |
| 19 | Համակարգիչ Grue 58.00 | հատ | 1 | 146.8 | 146.8 | Չի Օգտագործվում անսարք |
| 20 | Համակարգիչ 1620 | Հատ | 1 | 180.0 | 180.0 | Օգտագործվում է Բարվոք վիճակում է |
| 21 | Մոնիտոր LG 20 | հատ | 1 | 60.0 | 60.0 | Օգտագործվում է Բարվոք վիճակում է |
| 22 | Տպիչ i-sensys MF 3010 | հատ | 1 | 110.0 | 110.0 | Օգտագործվում է Բարվոք վիճակում է |
| Գրադարանի գույք | | | | | | |
| 1. | Գրքային ֆոնդ | հատ | 5630 | 304.5 | 304.5 | Մաշված |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Գրադարանային սեղան | հատ | 1 | 1.6 | 1.6 | Մաշված |
| 3. | Մետաղյա գրադարակ | հատ | 25 | 1.1 | 27.9 | Մաշված |
| 4 | Կատալոգի արկղ | հատ | 1 | 4.5 | 4.5 | Մաշված |
| 5 | Ցուցափեղկ | հատ | 2 | 4.15 | 8.3 | Մաշված |
| 6 | Աթոռ | հատ | 1 | 1.1 | 1.1 | Մաշված |

Մանկապարտեզի գույք

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մահճակալ մանկական | հատ | 9 | 0.77 | 6.9 | մաշված |
| 2 | գրասեղան | հատ | 7 | 3.0 | 21.0 | մաշված |
| 3 | Մանկական զգեստապահարան | հատ | 7 | 4.0 | 28.0 | մաշված |
| 4 | Մանկական սեղան | հատ | 14 | 2.3 | 32.2 | մաշված |
| 5 | Էլ սալիկ | հատ | 2 | 5.4 | 10.8 | մաշված |
| 6 | պահարան | հատ | 5 | 3.8 | 19.0 | մաշված |
| 7 | Էլ ջրի բակ кпе-60л | հատ | 1 | 24.3 | 24.3 | մաշված |
| 8 | լվացարան | հատ | 2 | 0.7 | 1.4 | մաշված |
| 9 | Կարտոֆիլմաքրելու գործիկ | հատ | 1 | 10.0 | 10.0 | անսարք |
| 10 | վաննա | հատ | 1 | 5.0 | 5.0 | անսարք |
| 11 | Մանկական անկողին | Հատ | 30 | 0.7 | 2.1 | մաշված |

Համայնքի ղեկավար Գ. Բարսեղյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ցողամարգ համայնք, հասցե_ գ. Ցողամարգ
հեռախոս 077317555, էլ. փոստ

## ՈՐՈՇՈՒՄ

«2» դեկտեմբերի 2014 թվականի թիվ 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ-Ի 12-Ի ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբեր-ի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ

Ա.Հարությունյան կողմ ---------------------------

Ս. Վարոսյան՝ կողմ ---------------------------

Խ. Հարությունյան՝ կողմ---------------------------

Վ. Մովսիսյան ՝ կողմ ---------------------------

Գ. Խաչատրյան ՝ կողմ---------------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Բարսեղյան

2 դեկտեմբեր 2014թվական գ. Ցողամարգ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ցողամարգ համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 2 -ի թիվ 21 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ չորս հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` տաս հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` քսան հինգ հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար հինգ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասնհինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տաս հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երեք հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երկու հազար դրամ

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար դրամ .

4) մեկ ամսվա համար՝ քսան հազար դրամ .

5) մեկ տարվա համար՝ հարյուր հազար դրամ :

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսան հինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական երեք հարյուր դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան հինգ դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տաս հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Բարսեղյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ցողամարգ համայնք, հասցե գ.Ցողամարգ
հեռախոս 077317555 էլ. փոստ

## ՈՐՈՇՈՒՄ

«2» դեկտեմբերի 2014 թվականի թիվ 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 27-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 21.16 %-ի չափով՝ 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ղեկավարի 2014 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 27_Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

| | | |
|---|---|---|
| Վ.Մովսիսյան՝ | կողմ | ---------------------------- |
| Ս.Վարոսյան՝ | կողմ | ---------------------------- |
| Խ.Հարությունյան՝ | կողմ | ---------------------------- |
| Ա. Հարությունյան՝ | կողմ | ---------------------------- |
| Գ. Խաչատրյան՝ | կողմ | ---------------------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Բարսեղյան

«_2__» դեկտեմբերի 2014 թ

գ. Ցողամարգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ցողամարգ համայնք, հասցե գ. Ցողամարգ
Հեռախոս 077317555

# ՈՐՈՇՈՒՄ

«2» դեկտեմբերի 2014թվականի թիվ 22-Ա.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 28_Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի1-ին կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա. հրամանը, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը` 4 ։

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 28-Ա. որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ. Մովսիսյան` կողմ ---------------------------
Գ. Խաչատրյան` կողմ ---------------------------
Ս. Վարոսյան` կողմ ---------------------------
Ա. Հարությունյան` կողմ ---------------------------
Խ. Հարությունյան` կողմ ---------------------------

Համայնքի ղեկավար` Գ. Բարսեղյան

Գ.Ցողամարգ

2 դեկտեմբեր 2014թ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ցողամարգ համայնքի ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 2 -ի թիվ 22-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարանի Աշխատակազմի քարտուղար | 1 | 112000 | 80 | 1 | 112000 | 112000 |
| 2 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 111000 | 79.28 | 1 | 111000 | 111000 |
| 3 | Գյուղապետարանի վարչական շենքի պահակ | 1 | 66139 | 47.24 | 1 | 66139 | 66139 |
| 4 | Հավաքարար | 1 | 70822 | 50.58 | 1 | 70822 | 70822 |
| | Ընդամենը | 4 | 359961 | - | 4 | 359961 | 359961 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Բարսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ն

«4» դեկտեմբերի 2014 թվական　　　　　　　　　　գյուղ Ցողամարգ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի 2015 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Գ.Խաչատրյան　　կողմ
Ա.Հարությունյան　　կողմ
Խ.Հարությունյան　　կողմ
Վ.Մովսիսյան　　կողմ
Ս.Վարոսյան　　կողմ

***Ցողամարգի համայնքի ղեկավար՝*** 　　*Գ.Բարսեղյան*

,,4,, դեկտեմբերի 2014թվական
գյուղ Ցողամարգ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի
ավագանու 2014թվականի դեկտեմբերի
4-ի թիվ 23-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| Հ/հ | Եկամտատեսակները | 2015թվականի ընդունված բյուջե /հազ. դրամ/ |
|---|---|---|
| *1* | *2* | *4* |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | *11361.1* |
| 1 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 2840.0 |
| 2 | Գույքահարկ շենք, շինություններ | 182.8 |
| 3 | Գույքիարկ փոխադրամիջոցների համար | 838.5 |
| 4 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա | 7099.8 |
| 5 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 400.0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

| Հ/h | Ծախսի նվանումը | Հոդվածի համարը | 2015 թվականի ընդունված բյուջե /հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | *11361.1* |
| 1 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 6712.0 |
| 2 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 521.0 |
| 3 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 200,0 |
| 4 | Կապի ծառայություններ | 4214 | 75.0 |
| 5 | Ներքին գործողումներ | 4221 | 70.0 |
| 6 | Համակարգչային ծառայություն | 4232 | 150.0 |
| 7 | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 40,0 |
| 8 | Կառավարչական ծառայություններ | 4235 | 60.0 |
| 9 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 700.0 |
| 10 | Գրասենյակային նյութեր | 4261 | 100.0 |
| 11 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 800.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Հուղարկավորության նպաստներ | 4726 | 250.0 |
| 13 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 850,0 |
| 14 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 70.0 |
| 15 | Պարտադիր վճարներ | 4823 | 40.0 |
| 16 | Պահուստային միջոցներ | 4891 | 723.1 |

*Յողամարգի համայնքի ղեկավար՝* Գ. Բարսեղյան